ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 75

ք. Արտաշատ

«11» 07 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ /ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ/ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԸ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված << Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման>> կարգի 50-րդ և 55-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Արարատի ներմարզային ավտոբուսային /միկրոավտոբուսային/ երթուղիները ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններին հատկացնելու մրցութային հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 30-ի թիվ 6 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ Ա. Պողոսյանին՝ սահմանված կարգով ապահովել հաղթող ճանաչված կազմակերպության հետ երթուղու սպասարկման պայմանագրի կնքման գործընթացը:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետի տեղակալ Ա. Մուրադյանի վրա:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված
ՀՀ Արարատի մարզպետի
2014թ. հուլիսի 11
թիվ 75 որոշման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 9

2014թ. հուլիսի 7-ին կայացած մրցութային հանձնաժողովի նիստի

Նիստի նախագահ Ա. Մուրադյան

Նիստի քարտուղար Ա. Հակոբյան

Նիստին մասնակցում էին մրցութային հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա.Պողոսյանը, անդամներ Ե. Հակոբյանը, Մ. Թադևոսյանը, Ա. Արամյանը, Ա. Դավթյանը:

Օրակարգ

2014 թվականի հունիսի 30-ին կայացած մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին- 2014թ. հունիսի 30-ին անցկացված ներմարզային ավտոբուսային /միկրոավտոբուսային/ երթուղիները ուղևորափոխադրող կազմակերպություններին հատկացնելու մրցույթի արդյունքների ամփոփման մասին:

Զեկուցող- հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մուրադյան

Արտահայտվեցին- Ա. Պողոսյանը, Ա. Հակոբյանը, Ե. Հակոբյանը, Մ. Թադևոսյանը Ա. Արամյանը, Ա. Դավթյանը:

Որոշեցին

1. 2014թ. հունիսի 30-ին կայացած մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչել ներքոհիշյալ կազմակերպությանը՝

N	Երթուղու համարը	Երթուղու անվանումը	Երթուղու տեսակը	Հաղթող ճանաչված կազմակերպության անվանումը	Ավտոմեքե-նայի անվանումը	Ավտոմեքենայի պետհամարանի շը
1	2	3	4	5	6	7
1	02-018	Վեդի-ՈՒրցաձոր-Շաղափ	ավտոբուսային	<<Վեդու ԲՈՒԱՏ >> ՍՊԸ	ՊԱԶ-672 ՊԱԶ-672	977UL26 305UL26

Հիմք մրցութային ամփոփիչ թերթիկ՝ 1 թերթ

2. Մարզպետի հաստատմանը ներկայացնել անցկացված մրցույթի արդյունքները և առաջարկել հաղթող ճանաչված կազմակերպությանը հանձնվող երթուղու սպասարկման ժամկետ սահմանել

NN	Երթուղու համարը	Երթուղու անվանումը	Հաղթող ճանաչված կազմակերպության անվանումը	Սպասարկման ժամկետը /տարի/	Փոխադրավարձը /դրամ/
1	2	3	4	5	6
1	02-018	Վեդի-ՈՒրցաձոր-Շաղափ	<<Վեդու ԲՈՒԱՏ>> ՍՊԸ	4	300

համաձայն ՀՀ կառավարության 2001 թ. օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված կարգի 55-րդ կետի 2) ենթակետի:

3. Սահմանված ժամկետում հայտ չստանալու պատճառով 02-010 <<Արտաշատ-Ջրաշեն>>, 02-025 <<Մասիս-Հովտաշատ>> ավտոբուսային և 02-029 <<Մասիս-Նոր Խարբերդ>>, 02-030 <<Մասիս-Նոր Կյուրին>> մկրոավտոբուսային երթուղիների մասով մրցույթը համարել չկայացած:

Նախագահ	Ա Մուրադյան	/ստորագրություն/
Տեղակալ	Ա.Պողոսյան	/ստորագրություն/
Քարտուղար	Ա.Հակոբյան	/ստորագրություն/
Անդամներ	Ե.Հակոբյան	/ստորագրություն/
	Մ. Թադևոսյան	/ստորագրություն/
	Ա.Արամյան	/ստորագրություն/
	Ա. Դավթյան	/ստորագրություն/

Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար՝ Գ. Մուրադյան